

ՀԱՄԱՇԵՆՆԱԿԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ Անվճար

Կովկասում 1917-1918թթ. տեղի ունեցած բոլոր քաղաքական ցնցումները բացասական ազդեցին նաև դպրոցական կյանքի վրա: Աննախանձելի դրության մեջ էին Վրաստանի հայոց եկեղեցական ծխական դպրոցները: Դրանց զգալի մասը մնացել էր փակ՝ շենքերը գաղթականներով լցված լինելու, իսկ մյուսներն էլ նյութական միջոցների բացակայության պատճառով:

Վրաստանի Հայոց Ազգային խորհուրդը (ՀԱԽ) հետզհետե վերաբացելով այդ կրթական օջախները, ստեղծեց իրեն ենթակա ժողովրդական դպրոցների համակարգ, որը Վրաստանի կառավարության կողմից պաշտոնապես ճանաչված չլինելով՝ փաստացի ինքնավար կարգավիճակով էր օժտված: Հարցի այդպիսի դրվածքին բանավոր համաձայնություն էին տվել Վրաստանի լուսավորության նախարարության պատասխանատու աշխատողները, մինչև որ մշակութային ինքնավարության մասին ենթադրվող օրենքով վճռվեր դպրոցական կնճռոտ խնդիրը¹:

Վրաստանի ՀԱԽ-ի տարրական դպրոցների վարիչ ԱՆ. Ստամբուլյանը գրում էր, որ 1918-1919 ուստարում «երջանիկ բացառություն է կազմում Սուխումի շրջանը, ուր տեղական [Հայոց] Ազգային խորհրդի միջոցով վերսկսվել է դպրոցական գործունեությունը: Այլ տեղերի համեմատությամբ այստեղ մտցված է հայ մանուկների պարտադիր ուսում, բոլոր գյուղերում բացված են դպրոցներ՝ ուսուցիչների բավարար քանակով և նախանձելի վարձատրությամբ: Ուսուցիչները ստանում են ամեն հարմարություն, 4000-5000 ռուբլի և նույնքան հաց և այլ մթերքներ²: Մամուլը հայտնում էր, որ «Աբխազիայի Հայոց Ազգ. խորհրդի համար դպրոցական գործը հոգաբարձության ամենամեծ առարկան է եղել: ...Չնայած գիւղացիների այս տարւայ տնտեսական անմխիթար դրութեանը, շնորհիւ ծխախոտի... ցածր գնի... ներկայ [1919-1920] ուսումնական տարւում ոչ միայն վերաբացւել են անցյալում գործող դպրոցները, այլ դրանց վրայ աւելացւել են բոլորովին նորերը Գագրիի և Կոդորի շրջաններում: Ազգ. խորհուրդը ամենամեծ ուշադրութիւն է դարձրել հնարաւոր սահմաններում ապահովել ուսուցիչների տնտեսական դրութիւնը և ազատել նրանց կենսական մթերքների գների աստիճանական բարձրացումից...»³:

Աբխազիայի հայկական տարրական դպրոցները որպէս ծխական գոյություն ունեին տասնյակ տարիներից ի վեր, սակայն չընդգրկվեցին Վրաստանի Հանրապետության դպրոցների պետական ցանկի մեջ⁴: 1919թ. օգոստոսի 1-ին Վրաստանի ՀԱԽ-ը ընդունեց «Կանոնադրություն Վրաստանի հայոց ժողովրդական դպրոցների»⁵, որի հիման վրա գործում էին նաև Աբխազիայի հայկական դպրոցները⁶: Նրանք բոլորը ստորին-տարրական դպրոցների տեսակին էին պատկանում: Վրաստանի ՀԱԽ-ի որոշումով այդ դպրոցների համար նախատեսված էր եռամսյա դասընթաց⁷: Սակայն Սուխումի քաղաքային, ինչպէս նաև Ծեբելայի և Սծարայի դպրոցները երկարայան էին, հետևապէս 1918-1919 ուս- տարում Աբխազիայի այլ հայկական դպրոցները ունեին մեկական դասարան⁸: Բացի այդ, միջոցների տնտեսման նպատակով, ՀԱԽ-ը 1919-1920 ուստարում վերածեց իր տարրական դպրոցները երկսեռների⁹:

ՀԱԽ-ին պատկանող տարրական դպրոցներում ուսուցումն անվճար էր¹⁰: Սուխումի շրջանային ՀԱԽ-ի գործունեության ընթացքում հայկական դպրոցների թիվն աճել էր 12-ից մինչև 30-ի, որտեղ ուսանում էր 1567 աշակերտ, այդ թվում 511 աղջիկ¹¹: Դասավանդող 57 ուսուցիչի աշխատանքը հսկում էին տեսուչը¹² (Վա-

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱԻԼՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

նախարարությունը պահում է 84 տարրական հայկական դպրոց¹³, այդ թվում Աբխազիայում՝ 27-ը: Վերջինիս 56 ուսուցիչի համար համապատասխան գեմստվաներում վարկեր էին բացվել հետևյալ հաշվով. 1) Աբխազիայի կոմիսարիատ՝ 5 հաստիք; 2) Գումիստայի գեմստվո՝ 31; 3) Գուդաուտայի՝ 11; 4) Կոդորի՝ 9-ը¹⁴: «Սուխումի շրջանի [Հայոց] Ազգային խորհուրդը դիմել է կառավարութեանը և նպաստ խնդրել իր շրջանի 30 դպրոցների համար: Կառավարութիւնը խոստացել է նպաստ տալ և ասի ա. ճումբուրիձեն այդ դպրոցները ևս մտցրել է [պետական

րեն հարց էր տալիս Ս. Սողոմոնյանը: Հոյս ունենալով օգուվել Վրաստանի իշխող կուսակցության ազդեցիկ գործիչների հետ իր մտերիմ հարաբերություններից, Սուխումի շրջանային ՀԱԽ-ի ղեկավար Խաչատուր Ավդալբեգյանը 1920թ. սկզբին դիմել էր լուսավորության նախարարին և խնդրել, որ նա պետական միջոցներից աշխատավարձի հավելումներ վճարի Աբխազիայի հայկական դպրոցների ուսուցիչներին, ինչպէս դա ընդունված է եղել պետական դպրոցների համար: Մամուլը իրազեկում էր, որ «Սուխումի Հայոց խորհուրդն աշխատում է պետութիւ-

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆ ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ (1918-1920 թթ.)




նից գեմստուների միջոցով... նպաստ ստանալ և պահել իր դպրոցները, որոնք ժողովրդի տնտեսական քայքայման պատճառով ծանր դրութեան մէջ են [հայտնվել]»¹⁴:

(Շարունակելի)

1. «Աշխատաւոր» (Թիֆլիս), 15. 03. 1920, N 60:
2. Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆ. 441, ց. 1, գ. 26, թ. 15:
3. Դպրոցական գործը Աբխազիայում // «Բանվորի ձայն» (Թիֆլիս), 05.10. 1919, N 4:
4. Հայ դպրոցները և վրաց մանուկը // «Նոր աշխատաւոր» (Թիֆլիս), 19. 09. 1920, N 134:
5. «Ժողովրդի ձայն», 05. 08. 1919, N 164:
6. «Նոր աշխատաւոր», 01. 10. 1920, N 143:
7. ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 48, թ. 61:
8. Ե. Տեր-Մինասեան, Վրաստանի հայոց դպրոցները // «Աշխատաւոր», 03. 07. 1919, N 132:
9. ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 48, թ. 84:
10. Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը և նրան ենթակա դպրոցները // «Նոր խօսք» (Թիֆլիս), 27. IX. 1920, N 6:
11. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 63:
12. Սկզբնականապէս այդ պաշտոնը վարելու հրավիրվել էր Հայաստանի խորհրդի անդամ, հանրաճանաչ տնտեսագետ և հրապարակախոս Թադևոս Հայրապետի Ավդալբեգյանը (Տե՛ս 1918թ. սեպտեմբերի 26-ին Թիֆլիսից Սուխումի ՀԱԽ անդամ Ս. Սողոմոնյանի նամակը՝ ուղղված Երևան՝ Թ. Ավդալբեգյանին.- ՀԱԱ, Թ. Հ. Ավդալբեգյանի ֆ. 393, ց. 1, գ. 237, թ. 4-5):
13. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 63:
14. А. М. Чочуа, Собрание сочинений, Т. 3. Сухуми, 1976, с. 90:
15. «Բանվորի ձայն», 08.08. 1920, N 32:
16. Տե՛ս հայտարարությունը // «Բանվորի ձայն», 12. 10. 1919, N 5:
17. Տե՛ս հայտարարությունը // «Բանվորի ձայն», 05. 10. 1919, N 4:
18. Այդ թվի հետ համաձայն չէր Վրաստանի ՀԱԽ-ի դպրոցական բաժնի վարիչ Ի. Չարունյանը, որի տվյալներով Թիֆլիսում գոյություն ունեին 19 պետական դպրոց, իսկ գավառում՝ 13 (Դարձեալ ա. ճումբուրիձեի յօդվածի առթիվ // «Աշխատաւոր», 29. 10. 1920, N 237):
19. Գ. ճումբուրիձե, Դարձեալ հայ դպրոցների մասին // «Աշխատաւոր», 22. 10. 1920, N 233:
20. Ի. Չարունյան, Վրաստանի տարրական դպրոցների գլխավոր վարիչ ա. ճումբուրիձեի յօդվածի առթիվ // «Մշակ» (Թիֆլիս), 01. 10. 1920, N 101:
21. Տե՛ս ՀԱԽ-ի նիստի արձանագրությունը // «Նոր աշխատաւոր», 02.10.1920, N 144:
22. Դաշնակցականները և Սուխումի Հայոց ազգային խորհուրդը // «Բանվորի ձայն», 03.10. 1920, N 40:
23. «Նոր աշխատաւոր», 02. 10. 1920, N 144:
24. «Բանվորի ձայն», 03. 10. 1920, N 40:

դարչակ Աղեկյան, այնուհետև՝ Տիգրան Սողոմոնյան) և հրահանգիչը, որոնք ենթարկվում էին Վրաստանի ՀԱԽ-ի կողմից նշանակված շրջանային տեսուչին (Վահան Թուրաբյան)¹³: Աբխազ ակամավոր մանկավարժ և հասարակական գործիչ Անդրեյ Չոչուան վկայում է, որ հայ ուսուցիչները տեղացի չէին և հրավիրվելով աշխատանքի նոյեմբերից մայիս, հատուցվում էին բնամթերքով¹⁴: Ի տարբերություն Վրաստանի հայկական ժողովրդական այլ դպրոցների, Աբխազիայում գտնվողները չէին ֆինանսավորվում Վրաստանի ՀԱԽ-ի բյուջեից և դրանց ծախսերն ամբողջովին հոգում էր տեղի հայ համայնքը¹⁵: Եթե Վրաստանի ՀԱԽ-ն իրեն ենթակա դպրոցներում ուսուցիչներին աշխատանքի հրավիրելիս բնակարանից, վառելիքից և լուսավորությունից զատ առաջարկում էր տարեկան 15000 ռուբլի աշխատավարձ¹⁶, ապա Աբխազիայի հայկական դպրոցներում այդ պայմաններն այլ էին: Աբխազիայի ՀԱԽ-ը, բացի ուսուցիչների կենցաղային պայմանների ապահովելուց, Սուխումի դպրոցում նրանց վճարում էր տարեկան 24000 ռուբլի աշխատավարձ, Ծեբելայի գավառամասում՝ 20000 ռ., 18 փուլ ծխախոտ, 2 փուլ լոբի, Գագրայի և Գուդաուտայի գավառներում՝ 10000 ռ. և ամսեկան 5 ֆունտ յուղ, 60 հատ հավկիթ, 30 շիշ կաթ¹⁷: Լուսավորության նախարարության տարրական դպրոցների վարիչ Գ. ճումբուրիձեն 1920թ. աշնանը պնդում էր, թե գանձարանի հաշվին լուսավորության

դպրոցների ընդհանուր] թուի մեջ, չնայելով, որ այդ դպրոցներն ամբողջովին ենթակա են Ազգային խորհրդին [և մինչև] այժմ նոյնիսկ մէկ կոպէկ դրամ էլ չեն ստացել կառավարութիւնից ու անցեալ [1919-1920 ուս]տարի ամբողջովին պահուել են հայ գիւղացիների հաշուով»²⁰, - գրում էր Վրաստանի ՀԱԽ-ի դպրոցական բաժնի վարիչ Ի. Չարունյանը: 1919թ. վերջերից Վրաստանում պետական ծխախոտային մենաշնորհի կիրառումը հանգեցրել էր Աբխազիայի հայերի բարեկեցության կտրուկ նվազմանը: Ըստ Սուխումի ՀԱԽ-ի անդամ Ս. Սողոմոնյանի, «շրջանի հայ գիւղացին մինչև այսօր տուել է իր [դպրոցների] ուսուցիչներին հաց, իւր, հաւ և այլն, բայց շնորհիւ այն բանի, որ կառավարութիւնը համարեա սնանկացրել է այդ շրջանի հայութիւնը, նա այսօր անընդունակ է մի կտոր աւելորդ հաց ունենալու, որպէսզի ուսուցիչներին բաժին հատկացնի»²¹: Քանի որ Վրաստանի և Սուխումի Հայոց ազգային խորհուրդների նախագահությունների միջև հարաբերություններն «այնքան էլ սերտ չեն եղել»²², ապա վերջինս Թիֆլիսից նյութական որևէ աջակցություն չէր ստանում: «Սուխումի շրջանում կառավարութիւնը բիւջէի եկամուտների մեծ մասը ստացել է հայ գիւղացու քրտինքով մշակած ծխախոտի միջոցով: Ինչո՞ւ այդ նոյն գիւղացին իրեն իրաւունք չպէտք է համարի կառավարութիւնից պահանջելու...իր աշխատանքից ստացած գոնէ մի չնչին մասը և հոգայ իր մանուկի ուսման գործը»²³, - իրավացի-



Ա/թ. օգոստոսի 21-ին 92 տարեկանում վախճանվեց հայրս՝ Արսեն Հակոբի Յալանուզյանը՝ Հայաստանում բնակվող համալսարանային գիտնական ավագագույնը: Ծնվել է 1917թ. մարտի 27-ին Արխազիայի Գուլրիփշի շրջանի Ազանտա (Աբլուխվարա) գյուղում: Պապիս՝ Հակոբ Սարգսի Յալանուզյանի որդի գերդաստանը Սև ծովի հարավային ափից՝ Տրապիզոնի նահանգի Սամսոնի գավառի Չարշամպա գավառակի Կապազկո գյուղից Արխազիա է գաղթել 19-րդ դարի 80-ական թվականներին, երբ պապս եղել է 13 տարեկան: Չափապես դառնալով՝ նա ամուսնացել է, ունեցել 2 որդի՝ Համբարձում (Հոնայիզ) և Եփրեմ: Կնոջ մահից հետո կրկին ամուսնացել է: Երկրորդ կինը նրան 6 զավակ է պարգևել՝ Անդրանիկ, Աշոտ, Արաքսի, Հարություն (Արուտ), Արսեն և Փեթրոսի (Փեթրոս): Այսպիսով, հայրս պապիս որդիներից կրտսերն է եղել,

ՀԱՅՐԱ

այժմ Սուխումում ապրում է 97-ամյա Արուտ հորեղբայրս: Գյուղի 8-ամյա դպրոցից հետո հայրս ուսումը շարունակել է Սուխումի նկարչական ուսումնարանում, որը հանգամանքների բերումով չի ավարտել. բանակում ծառայությունից անմիջապես հետո սկսվել է Մեծ հայրենական պատերազմը: Պատերազմից հետո ուսուցիչ է աշխատել Աբլուխվարայի 8- ամյա հայկական դպրոցում, դասավանդել նկարչություն և ֆիզկուլտուրա: Նկարչական դպրոցում ստացած գիտելիքները հորս անհրաժեշտ եղան կյանքի գրեթե մինչև վերջին օրը: Սոսիկ ու հեռու հարազատներին, հարևաններին, ծանոթ ու անծանոթ մարդկանց, հատկապես երեխաներին նա նվիրում էր իր ջրաներկ ու մատիտանկար աշխատանքները, և դա նրան մեծ բավականություն էր պատճառում: Ընդհանրապես, իր չափով արվեստի մարդ էր հայրս, ինքնակրթությամբ լրացրել էր կրթության թերիմ, ընթերցասեր էր, սիրում էր զբաղվել զավակների ու թոռների դաստիարակությամբ: Վերջիններսիս համար հազար ու մի խաղ ու խորհրդավոր արկած էր հորինում, նրանց արձակուրդներում երևանի մերձակա վայրերը: Գրելու հակում ու ծիրը ուներ: Մանավանդ վերջին երեսուն տարում, ծննդավայրից ու հարազատներից հեռու ապրելով (1978թ. ծնողներս մշտական բնակության են տեղափոխվել Երևան), նրանց կանոնավորապես նամակներ էր գրում, որոնց մեջ սովորական «բարև-ոնց եք»-ից գատ վերհիշում ու շարադրում էր իրենց գյուղում վաղուց կատարված դեպքերը, նկարագրում երևելի համագյուղացիներին, նրանց հետ պատահած անցած-գնացած պատմությունները՝ նուրբ հունորով շեշտելով տվյալ անձի կամ դիպվածի զվարճալի կողմերը: Հարազատներն ու համագյուղացիները միմյանց լուր էին տալիս, թե «Յալանուզ Արսենը ալի նամագ էգած ա», հավաքվում էին, կարդում, վերհիշում, երբեմն էլ հորս հուշում նորանոր թեմաներ, որոնցից շատերը պատմվածքի ու հուշագրության հիմք էին դառնում:

Հայրս բազմաթիվ գրառումներ է թողել, որոնք խմբավորելու համար բավական ժամանակ կպահանջվի: «Չայն համալսարանի» խմբագրությանն են տրամադրում վերհուշերից մեկը՝ «Հոյս քարը», որը գրված է բարբառով, ինչպես նաև մի քանի այլ նյութ: Ի դեպ, թերթը նախկինում՝ 2004թ. N 3-ում նույնպես անդրադարձել է հորս գրություններին, տպագրել նրա մանրապատումները: ԿԱՐԼ ՅԱԼԱՆՈՒԶՅԱՆ

ԼՈՒԹՅԱՆ ՉԱՅՆԸ

Ի՞նչ իմանաս՝ ինչ է տանում մարդ հետը: Անվերադարձ: Մեզ մնում է թողածը՝ այն, ինչ մնում է ի վերջո՝ իբրև հուշ, պատմություն ու այլևս անփարատ կարոտ: Բայց նախևառաջ այն, ինչ մեծ Արսեն պապի ծոռները՝ Նարեկի ու Տաթևիկը, կրում են երակներում՝ որպես արյան ու ոգու ժառանգություն: Եվ դա է, որ ապրում է հավերժական ժամանակի մեջ: Գնա՛ գտիր ծայրը... Դեմքին խաղաղություն կար, բայց մոխրագույն աչքերը՝ գուլպա ու տխուր, երբեմն ամոթխած ժպտում էին, անկեղծորեն զարմանում, իսկ երբեմն էլ ասես ներս էին նայում՝ խոր, սևեռուն: Փակվում էր: Չարմանալի լռություն ուներ: Ես սիրում էի նրանց տան այդ լռությունը, որ շնչելու, ապրելու տարածություն էր բացում մի տեսակ: Նրա ներկայությամբ կարող էիր ինքդ լինել ու հավելել, ինքնանալ, ձուլվել այդ հանդարտ, խոհուն լռությանը և լռել արդեն քո՝ լռությամբ: Ծատ քիչ է հանդիպում կյանքում քեզ համար տարածություն բացող և քո ներքին տարածությունը հարգող մարդ: Գրեթե բոլորն ուզում են խել թունդ և իրենցը պարտադրել քեզ... Չարմանալի մարդ էր: Նրա ներկայությամբ հնարավոր չէր վատ բան մտածել, ուր մնաց ասելիք: Պատկառանք էր ներշնչում անխոս: Ոչ մի կյանքի դաս, ոչ մի բարոյ, ուսուցողական կեցվածք կամ դիտարկում: Սովորեցնում էր անբառ: Լռում էր իր զարմանալի լռությամբ ու ասում այն, ինչ հնարավոր չէ ասել բառերով: Ոչ մի բարդ բան. նա պարզապես տիրապետում էր լռելու և մարդուն հարգելու արվեստին: Բայց ես մեղավոր եմ նրա առաջ... Ես փորձում էի թափանցել նրա լռության մեջ, որովհետև անհավոր հետաքրքիր էր, որովհետև կարծում էի, թե կյանքի մասին գիտի մի բան, որը ինքը չի ասի, ինքս պիտի հասկանամ: Բայց ես դեռ չէի սովորել նրա մեծ լռել, դրա համար էլ ուզում էի թափանցել նրա խորհրդավոր լռության մեջ, որը գուցե բացբնում էր երկարակեցության գաղտնիքը: Չգիտեմ: Համենայն դեպս ինձ այդպես էր թվում այն ժամանակ: Իսկ հիմա նա չկա: Նա գնաց՝ թողնելով մեզ իր լռությունը՝ հանդարտ, իմաստուն, ազնիվ ու արդար լռությունը, որի մեջ մեզինքն յուրաքանչյուրն ուներ իր ծայրը, իր շունչը, իր բաժին սերն ու կարոտը: Իսկ մնացալը... Լռություն:

Ծոռան՝ Նարեկի մայրը՝ ԼԻԼԻԹ ՄԵՅՐԱՆՅԱՆ

Ե կեք ինձ հետ, ձեզ ցույց տամ մեր գյուղը: Բարձրանանք ա՛յ են պաղ ջրի վերևի բացատը, որտեղից ամբողջ գյուղը երևում է: Մեր գյուղի անունն է Աբլուխվարա, շատ սիրուն գյուղ է՝ տեղը, տեսքը, օդը, ջուրը: Բայց դե, ասելով չի, այնտեղ գոնե մի տասը տարի պիտի ապրես, որ հասկանաս, թե ինչ է Աբլուխվարա ասված գյուղը: Սղոց Գաբեղի (Սղոցյան Կարապետ) ասելով՝ Աբլուխվարա նշանակում է երկու ձորի միջակայք, կամ արխազերեն է, կամ չերքեզերեն: Կողք կողքի մի քանի գյուղ կա՝ հունաբնակ՝ Քալասուր և Սուլի գյուղերը, Քյուլյաններն և Մուսնյանների գյուղերը, հետո Ափուշտան է, իսկ եթե դեպի ծով գնանք՝ Ֆնդըբլուղը, Իֆտերլուղը, Գարգամիշը և վերջապես Չարալը (Ծեբեղա): Բայց սրանցից լավագույնը մեր գյուղն է՝ Աբլուխվարան: Հիմա կասեք, թե ամենքիս ծննդավայրն իր համար լավ է թվում: Ծիշտ է, բայց դե, ինքնեղբ ասեք, որ տեսեք: Եթե ուզում եք, գնանք գյուղամեջ, այսօր կիրակի է, և այնտեղ Սարգիս Աղայեկի (Սարգսյան Աղայեկ) տան մոտ են հավաքվում գյուղի մեծ պապերը, որը թուրք է խաղում, որը խոսք ու զրույց է անում: Այս մարդկանց հայրերը մի քառասուն-հիսուն տարի առաջ Տաճկաստանի Տրապիզոն, Օրդու, Ջանիկ քաղաքներից ու մերձակա գյուղերից են տեղահանվել ու հայտնվել այս կողմերում: Լավ մարդիկ են, բոլորն էլ աշխատող, անող-դնող: Ծխախոտ են մշակում, եգիպտացորեն, լոբի... Ծիշտն ասած, տեղն էլ հարմար է, հողը՝ բերրի, ջուրը՝ մոտիկ, սարը՝ մոտիկ, իսկական ռանչպարի տեղ: Հապա սարի միջոց ու հատապտուղը, էլ չորթուղ-աճուղը (վայրի մանր խնձոր), գլիրը (զկեռ), գողալը (հոն), ընկույզը, էլ որն ասեմ: Ծամփի եգրից հավաքիր, լցրու պարկերը, տար տուն, կամ պահիր ծմեռվան, կամ բաքմազ եփիր: Մոռանալու բան չէ մեր մաշնուրկը (շագանակ): Սարգիս Աղայեկի տան մոտ են հավաքվում ոչ միայն պապերը, այլև ջահելները: Տղա-աղջիկ մինչև երեկո խաղում են հարևան Քերսելի Ղազարի (Քերսելյան Ղազար) տան մոտի մեծ բացատում, ավելի մեծերը մոտենում են ակեղներին, դիտում նրանց թղթախաղը կամ լսում անվերջանալի պատմությունները: Արևը դեռ մի մարդաբոյ չի բարձրացել,

ԱՔԼՈՒԽՎԱՐԱ



Սուխումի նկարչական ուսումնարանի սաները: Կանգնածներից ծախից առաջինը Ա. Յալանուզյանն է, 1937թ.:

բայց մարդիկ սկսում են հավաքվել: Դիմացի գյուղից գալիս են Յալանուզ Օվագիմը (Յալանուզյան Հովակիմ) և Սղոց Գաբեղը (Սղոցյան Կարապետ), նրանց հետևից՝ Մուսնյի Ազրը (Մուսնյան Մկրտիչ) ու Յալանուզ Կիվորը (Յալանուզյան Գևորգ), վերի գյուղից Սարգիս Արամն (Սարգսյան Արամ) ու Յայի Առաքելը (Յայյան Առաքել), Ղազարօղլի Վարտոնը (Ղազարյան Վարդան) և Մալխասը, Յալանուզ Ազոպն (Յալանուզյան Հակոբ) ու Բույուքլի Ալեքսանը (Բույուքլյան Ալեքսան), ներքևի գյուղերից՝ Քյուլլի Նշանը (Քյուլլյան Նշան) և Սարգիսը, Քերսելի Ղազարը (Քերսելյան Ղազար) և շատ ուրիշները: - Էհ, պարի լուս, միլլաթ: - Աստղծու պարին: - Հալ-քեֆ... - Լավ, բեքքը: - Ալթմիշ-ալթմիշ (վաթսուկեց) նեղինք հե՞ջ տա: - Քեֆըդ կիդա, ես հազըր իմ: Փռան կողքի բլրակի գլխին պագել է Սարգսյան Արամը, նրան շրջապատել են հինգ-վեց ջահելներ և բերանները բաց լսում են պապի զվարճալի պատմությունները:



Ա. Յալանուզյանը բանակում, 1940թ.:

ները: - Արամ քեռի, հեջ արջ սպանե՞լ ես, հարցնում է մի կատակասեր երիտասարդ՝ Յալանուզյան Արմենակը:

- Մի հատ ե՞մ սպանել... սպանելուց գատ մի արջ էլ էշի տեղ դրած համարյա հեծել են,- ոգևորվում է Արամ քեռին և շարունակում:- Մեր տան վերևի արտում մի փոքրիկ հողիկ էի շինել: Մի գիշեր սպասեցի, սպասեցի՝ արջ չպատահեց: Ժամանակն անցնում էր, և աչքերս փակվեցին: Մեկ էլ որ արթնացա, մի խշխշոց լսեցի: Մինչ հրացանս էի պատրաստում, տեսա, որ արջը հողիկիս տակ է: Մտածելու ժամանակ չկար, հրացանս ուղղեցի դեպի արջը: Մեկ էլ ինչ տեսնեմ՝ զենքը ձեռքիցս ընկավ: - Արամ դայի, չլինի՞ թե հրացանը վախից ես վայր գցել,- մյուսներին աչքով է անում ջահելներից մեկը: Արամը արհամարհանքով նայում է հարց տվողին, անպատասխան է թողնում նրան և խոսքը շարունակում: - Չգիտեմ, թե ինչպես պատահեց, բայց հրացանիս հետևից ես էլ ցած ընկա և հայտնվեցի արջի մեջքին, այն էլ թարս նստած: Գագանը փնթփնթաց, մրթմրթաց և ինձ արտն ի վայր շարտեց, այնքան հեռու, որ մի կերպ ոտքի թռա, հրացանս վերցրի ու փախչող արջի կողմը բռնելով՝ ձգանը քաշեցի: Իզուր գնդակ փչացնել էր, արջը ոտքով-գլխով անհետացել էր: «Այս անգամ գնա», մտքումս ասացի ես: Եվ իրոք, շատ չանցած, մի լուսնյակ գիշեր, նույն արջը բռնացրի հողիկի վերևի ցանկապատի մոտ: Գլուխը կախ իմ կողմն էր գալիս: Հրացանս քաշելն ու կրակելը մեկ արեցի... Այդ արջի մսից մեր գյուղացիներից շատերն են կերել, փոստն էլ մեր տանն է... Այս խմբից մի քիչ ներքև երիտասարդներին իր արկածներն է պատմում մեկ այլ որսորդ՝ Քյուլլի Սարգիսը, կլոր գլխով, գեղեցկադեմ, զվարճախոս ու անվախ մի մարդ: Մեծ-մեծակ է որսի գում, տասը, տասնհինգ օր թափառում է սարերում և առանց որսի տուն չի գալիս: - Գիտեք ինչ կա, արջն էլ, գայլն էլ, վարագն էլ մարդուց վախենում են,- ծանր ու մեծ սկսում է Սարգիս դային:- Եթե ճիշտը կուզես իմանալ, ես էլ եմ մարդ արարածից վախենում: Երբ անտառում կամ սարում մենակ եմ, վայրի կենդանուց վախ չունեմ: Բայց ասե՛ք թե մի մարդ է հանդիպում, գալիս բարևում է, հետո հաց է ուտում... Դու ի՞նչ գիտես, թե ինչ է մտքիդ: Քիչ անց կարող է հարմարեցնել և վերջո տալ, թողնել գնալ... (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

Մի քանի քայլ այն կողմ մի մեծ խումբ է գլխին հավաքել Սողո Գաբրիել (Սողոյան Կարապետ)՝



Կնոջ՝ Գանեստ Սարգսյանի հետ, 1946թ.:

Գաբրիել քեռի, ասում են՝ իբր շատ տարիներ առաջ մի աղջիկ փախցնելուց հետո վերջինիս հայրն ուղեցել է քեզ սպանել:

Եղել է այդպիսի բան: Նիկոլ Գարի ժամանակ էր, Յաշարա գյուղից աղջիկ էինք փախցնելու Թոփչի Արշակի (Թոփչյան Արշակ) համար: Ես էի, հայրը՝ Յալանուզ Գալստյան (Փափազյան Մարտիրոս), էլի վեց-յոթ հոգի: Աղջիկը համաձայն էր, բայց հայրը՝ չէ ու չէ, չէն տա. մի խոսքով, քարը վերև էր նետում՝ գլուխը տակը պահում: Դե, մենք էլ գործի անցանք: Գալստյան էլի մեկը հետախուզության գնացին, հետո լուր տվեցին, որ մենք էլ մոտենանք տանը: Սահակյան Արթինի տունն էր, աղջկա անունը՝ Կարոյանուշ: Մթույթի մեջ մոտեցանք տանը, պատի ճեղքից նայեցինք, որ երեքով են՝ աղջիկը և ծնողները:

Երբ մայր ու աղջիկ պառնեցին քնելու, իսկ հայրը տնամերձի կողմն էր գնացել, մենք սուսուփուս մտանք տուն, աղջկան փաթեցինք յափնջիով, տնից հանեցինք և ճանապարհին ուզում էինք կապել բերանը, երբ նա հագիվ-հագ հասցրեց ասել՝ ես աղջիկը չեմ, մայրն եմ...

Լավ է, որ շատ չէինք հեռացել, վերադարձանք, մորը բողբոջինք սենյակում, աղջկան վերցրինք ու... հայրեք, դեպի Աբուխավարա:

Անցան տարիներ, ավելի ճիշտ՝ յոթ տարի: Այդ դեպքը մոռացել էի, երբ Յաշարայում մի գործ պատահեց, պետք է ծանոթիս այցելել: Գնացի: Դու մի ասի՝ ճանապարհին անցնում է այդ նույն Սահակյան Արթինի տան մոտով, և նա ճանաչում է ինձ ու բարկս չի պատասխանում, մտնում է տուն, հրացանը ձեռքին դուրս գալիս ու... «Գաբրիել, քեզ սպանելու եմ»: Ձեռքիս մի երկար ու հաստ փայտ ունեի: Մինչ կհասցնեի հիշել, թե այդ մարդուն ինչ վատություն եմ արել, հրացանը ճայթեց, ձեռքիս փայտի վերին մասը ջարդվեց-ընկավ: Ես, իհարկե, ամեն բան հասկացա և փայտիս մնացած կտորը շարժեցի Արթինի ճակատին: Մարդն ընկավ, արյունը ցայտեց ճակատից: Ուզեցի մի քանի հարված էլ հասցնել, բայց մարդացիները հավաքվեցին տեսնելու, թե ինչ է պատահել: Պատմեցի ամեն բան, որ յոթ տարի առաջ էսպես ու էսպես, որապես փախցրել եմք, առոք-փառոք ապրում է, երեք երեխա ունի: Իսկ այս մարդը հրացան է քաշում վրաս, թե... քե՛ն է պահել:

«Մարդ չի ձեր հարևանը»,- ասացի ու թողեցի հեռացա: - Եկեք մի քիչ էլ Ակոր քեռուն լսե՛ք: Ասում են, թե գեներալ-բանի հետ գործ ես ունեցել,- Յալանուզյան Գալստյան է դիմում Դազարյան Մալխասի ավագ որդին՝ Սամվելը, որն ինքը ևս պատմելուց ու խաղ ասելուց լավ է, վայելչակազմ մի երիտասարդ: - Ջանըմ, երկար-բարակ պատմելու

բան չկա, սկսում է Յալանուզ Գալստյանը: - Կարծես 12-13 թիվն էր: Ծեբելոյի մեծերը՝ Թոփչի Ազգունը (Թոփչյան Արզունյան), Քերսելի Դազարը (Քերսեյան Դազար) կամավոր էին գրում Տաճկաստան ուղարկելու համար: Տաճիկը շատ էր հալածում հայերին, պահանջում էր կամ կրոնափոխվել, կամ տեղահան լինել հայրենիքից: Կամավորներին մարտի էին տանում քաջ Անդրանիկը, Սմբատը... Մեր Ծեբելոյից էլ շատ գնացող եղավ: Մի օր Քերսելի Դազարն ինձ կանչեց, թե Ակոր, Սուխունից 12 հրացան պետք է բերվի Ծեբելոյ, դու պիտի բերես, չորս հոգի էլ օգնական կտանք: Գիտես, էլի, եթե բռնվես՝ դու էլ կկորչես, մենք էլ:



Աբուխավարայի 8-ամյա հայկական դպրոցում, 1955թ.:

- Ջանըմ, բռնվելը հեշտ է, չբռնվելը՝ հունար, օգնական էլ պետք չէ,- ասացի ես ու հաջորդ օրը մեկնեցի Սուխուն: Մի հույն ծանոթ ունեի, լավ մարդ էր, լավ էլ հյուսն: Իջանք Աբուխուն և ըստ իմ ծրագրի միասին սարքեցինք երկու երկտակ արկղ: Գիշերը հրացանները բերեցինք ու տեղավորեցինք արկղերում, իսկ հաջորդ օրը վերին շարքում, գեներալի վրա լցրեցինք բանջարեղեն՝ բաղձրան, պղպեղ, վարունգ... Ծանապարհ ընկանք: Առաջին պահակակետը Մերխեսուկ գյուղումն էր: Սայլը կանգնեցրին, տեսան բանջարեղենն ու թողեցին, իսկ Օլգինսկիում սայլին նույնիսկ մոտ չեկան: Երեկոյան հասա Ծեբելոյ: Սայլը քշեցի Թոփչի Լևոնի (Թոփչյան Լևոն)

տան մոտ և դատարկեցի: Նույն գիշերը հրացանները հանձնեցի Քերսեյան Դազարին և գնացի մեր գյուղ: **ԱՐՄԵՆ ՅԱԼԱՆՈՒԶՅԱՆ** ¹ Աբուխավարա- ըստ ՅՄԳ-ի՝ հայաբնակ այս գյուղը Գուլիփշ շրջկենտրոնից հեռու է 38 կմ: 1968-ին ունեցել է 164 բնակիչ: Կուլտնետեսությունը գրադվել է ծխախոտի, եգիպտացորենի մշակությամբ, անասնապահությամբ: Գյուղը, որը 1890-ական թվականներին իրմանադրել են Տրապիզոնից, Ջանիկից գաղթած հայերը, հայտնի է նաև Ազանտա անվամբ, քանի որ թե՛ Աբուխավարան, թե՛ հորս պատմվածքում թվարկված մյուս գյուղերը եղել են Ազանտայի գյուղատիրոջ կազմում: Այժմ, հատկապես 1992-1993 թթ. վրաց-աբխազական պատերազմից հետո, այս բոլոր գյուղերն անայացել են: Նախկին գյուղացիները երբեմն որսի կամ հատապտուղ հավաքելու են գնում այդ կողմերը, եկեղեցական տոներին այցելում նախնիների գերեզմանները: Բնակչությունը որոշ չափով պահպանվել է Ծեբելոյ և Մերխեսուկ գյուղերում: ² Խորհրդային կառավարությունը 1949 թ. Աբխազիայի հույներին աքսորել է Դազախստան: Մայրս՝ Գանեստ Արմենակի Սարգսյան-Յալանուզյանը (1920 - 2008), պատմում էր, թե ինչպես էին աքսորյալներին տանում մեր գյուղի միջով, լաց ու վայնասուն, զինվորների ազգություն... Հույներին տեղահանելուց հետո էլ մի քանի շաբաթ շարունակ հանդից ու անտառից լսվում էր անտեր մնացած անասունների բառաչք: Կառավարությունը հույներին ներում է շնորհել 1960-ական թվականների վերջին և թույլատրել վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը: Վերադարձել են քշերը: Կրաց-աբխազական պատերազմի ժամանակ Գանեստյանի կառավարությունը տեղ է կանգնել իր գավառներին և նավով տեղափոխել Գուլստանը: Ծանոթագրություններ՝ Կարլ Յալանուզյանի

ՀՈՅՆ ՔԱՐԸ

Դակ, կայնոնոն օր մըն էր, հոյս հեղը ջոմպա էլած այլը, ծիյով Մարխավուլու կեղըն Ջաբալ, հունըն էլ Աբուխավարա էշտուշի հոմար: Յես նստած էլ մի գարմիր, գաբուն ծիյուն վրըն, էղվոնծըն խաղալըն կուկար բիջիլի, քասուլից թայլուջը ջերմագ աստղի բես սակարը ջագդին: Դայս՝ վատնունին մոդիզ, մագերը ջերմզգած, ամա դիս դալիկունու բես, էրգու ծեռվին տրոած մեջկին, գեշտար առաջըն: Յես դասընդեգիս էլը, քիչ մը ավելնոց, ամա ջարթից դըղը մըն իմ, ոյիկըս՝ ծաղգած ձառերուն, թռչող ջիմջուկակունու աշելըն, հայս՝ միտակ ընելըն վեվ կիդա ինձեր, գեշտունկ: Դալբատ, կիս գաշտողը համան ասա բիդի: «Անեվա, հայր կոջա, էխտիար մաշտ, քալունձ գեշտա, տուն դասը դարիգոն ջարթից դըղա՝ ծիյով»: Ամա, սաբըր արա, կաֆադարըմ, մենը լըսա ասելիկըս, եղկըն էլ տուն գասիս: Յես հալբատ օր ծի նստուլ հազ զընին, ամա աս ջոմպու հայս նըստըծուն, «յես օր նաճարիմ, յես նըստիմ գու» ասելըմ:

Ամոն իշտի, գոմած-գոմած գեշտունկ, յես նաս-նըն աշելըն, հայս՝ ուր մըտկերուն հեղ, բազի-բազի էլ ըռաստ էգոդ մաշտակածը պարեվ հալըն: Շաղ սըրա օնձած չէր կիդիս տա, հասակ Քար բուղագ աստըված դեղը: Գաշիմ հայս ինձի տա: «Մօնճըս, մենը ծիյուն ինձի, քիչ մը հոնկչի տող, տուն էլ թայլուջը գյոգատմիշ արա՝ յոր, մաշիմս ինձի մը կա նա, իրկմիշ չըլլի»:

Յես համան ցած թըռա ծիյուն վրայըն, դիզգինը դիկ հոյս ու թայլուն հեղ դոծկաղեղըն, մենը առաջ գոսնիկն, մենը՝ յեղ: «Իսկաբես օր Քար բուղագ ա,- մտկիս գասիմ յես,-առաջ գաշիս՝ քար, վիր գաշիս՝ քար, վար գաշիս՝ քար: Ըն էլ ի՞նձ քար խոշեր, բազլունա-բազլունա կիդիս տա դաստա ըղած ունիս իրար վրա: Գարմընոմ գու յես աս քարերուն աշելըն...

- Հիմի քիչ մը հոնկչիկն, մոնճըս, ծին էլ քոնիմը խեղ փեղա տող,- աստավ հայս՝ ջոմպուն յոնի քարին մոդընալըն ու քեսըն հոնկավ, ծիգարը մը փատտեծ: Յես գոյնած դըլիկըն գաշիմ. քար, քար, Քար բուղագ... Ամա սաղա քար չա, ահակին էլ ձառ-ձաղիգ գա ջոմպուն ըլլիկը, ցածըն էլ բիջիգ կեղմը լըխա գու, կեղին մոդ սըխ դոսիս,

առողջի ծառ գա, ջոմպուն էրգու թարաֆն էլ, բառզողիկը, խոշեր լորի, արծի ծառ: Արեվը էպեր մը պարսոծավ, օրը դակծավ: Ծին համան միր յոնը գայծի, թայլուջը ձըծադու մորը:

- Դեյիսա՛, ինս քարը դեանո՞ւս գու տա... Արսեն,- ծերկը լարած տիմածի բառգին թարաֆը, հայծուծ հայս ինձի:

- Ինս մեծ քա՞րը տա...:

- Հա, հա, ինս ջերմագ դաշուն կըլխուն, քաթերուն վրըն էլած այ՛ճ ըմոնի գու:

- Էիս, դեսմուն գու հալբատ,- աստի յես:

- Աղ քարին բաղմուտինը բիդի ընիմ քեզի: Դըհա ուվեկու էլ աստած չունիմ, ամա մաշտ իս, աշխըրկիս ըմըն ինձ էլ բաղաի գու: Օրըն տուն էլ քու դըղոծըր, թոռներուդ գասիս... Բալիկ էլ քառսուն դարվոն պոն ա, ալալ շաղ...:

- Բաղմա աշինկ, բաբա, աղ ինձ բաղմուտին ա,- հեղակըրկիր ըղա ես:

- Ըն սըղմին ես դասըվեց դարիգոն գըլլեյ անջա, նորըն էգած այկը Փիսիխաս կեղըն,- նախքեծ հայս ուր բաղմուտինը:- Գինայկ կու Ջաբալու վերտին՝ Կիտիշինսկի կեղին: Հայս՝ Սարկիս բաբըր, գատը թուրունջի էր, Դաջգաստանըն նաս, ներ էլ կընձածիկն նա, թութուն գնայկը: Աղ դարին օր գասիմ նա իշտի, ֆիդընիս լավ չըղավ, է, թութուն սաղունջի սրըն էլ գոսնի յավաշ-յավաշ: Օր մը, գաշիմ, ծըն էրիդ ինձի տա: «Ազոպ, մոնճըս, գայնա՞ս ծիյով էշտալ Մաջարա, հուն ջոմպու մաշտ մը ունիմ, էշտայր քիչ մը ֆիդա պերեյր»: «Գեշտոմ, էբա,- աստի յես,- օրի չիմ գարի»: «Ըմոնտը նա, ծին խաս մը գշտըծուն օր ակվընձու շավաղին հեղ ըլնիս ջոմպա: Մոյր էլ ասա յոր քիչմը բաշար-մաշար հազրա, ջոմպուն գոնըտընսա: Շիդագ գեշտաս Մաջարա, համան վերտին, Յոնոլի Օվես օր ասիս, ալլայ ջոմճին գու, գասիս օր Յալանուզ Սարկիսը դրած ունի, ես ընու հեղ հաշիվըս դեսում գու»:

Նախա, եղի օրը թեգով վիր էլա, գալընդին պարծունծի ծիյուն, ես էլ նըստա յո, յալլա, ընգա ջոմպա: Հա, թայլուջ մըն էլ ունեյկը, ջիպիս քայուն բես, գարմիր՝ ջագաղը՝ սակար, աղ քայն էլ ծիյուն հեղ: Է՛, շիդագով շաղ թեգ էր, ջոմպընին ինսուզ, մաշտ չիկա, քունըս էլ դոնա գու, ամա ինձ բիդի ընիս, էշտըվի բիդի: Հասա Օլգինսկի, անջա արեվը ճահեց, օրտալուղը դակծավ: Մըղա Քար բուղագին

ջոմպըն, գաշիմ ընտիյըն նաս մգռելի արաբը մը կունշա եգնին ընձված, էրգու հոկի էլ վրըն նըստած՝ կուկոն: Մոդգըծա աղեծ, «գամարոբա» աստի, աղեր էլ պարեվըս առիմ ու մըգռելվար իրար հեղ խորատեղըն՝ օնձոն: Յես ծիյուն քալիկ չաբուխոնծի, ամա միտակ արի յոր, դըհա շաղ ջոմպա ունիմ էշտուշի, իշնուն քալոնձ էշտոմ, ծին էլ քիչ մը հոնկչի տող:

Աղմոն էլ արի: Ինձա ծիյուն, դիզգինը թեվըս օնձուն յո յավաշ-յավաշ գեշտոմ: Ըհըն ինս դեղին օր հասա, կիդիս տա յոնսա հեղ ցածը ծորին ինձիմը քալըրդած... Գաշիմ դաշնիվար քոնի մը կերմագ քար կըլղորվի գու, ջիպ կիդիստա ինս մեծ քարին յոնուծըն... Ծին գոյնըծուն յու էլի գաշիմ սըտ-կիլան... Դո, կիդիս տա իդա մեծ քայն էլ ծածիգու, հա՛-հա՛ կլորվի բիդի: Ծիս քաշեծի ջոմպուն յոնը յո քարի մը վրըն նըստա, դիզգինը ծեռիս, ածվիս քարըն չիմ գըղոիլ... Մըտկիս գասիմ տա՛ իդա մեծ քարը կըլղորվի նա, թամիգ ջըմբըջ գըլլի... Է՛, չիդիմ տա ինձկան մընածի աղմոն նըստած, մըն էլ ի՛նձ գասիս, քունս դարած ունի, ածվիս խաված ին. նեյգիս, գաշիմ, մոդաս հեղ մեծ գարմունջ մը վար գիշնու, ցածըն էլ ինձի-գերմըն ալտունի բես բըլբըլոն գու՝ փայջ, օնձնեղեն՝ քասուն, նաղըլլի: Միլլատն էլ իրար էղվոնձ ցած գիշնուն, պարծըվորվին, վիր կեղին: Միտակ արի՛ ես էլ իշնուն, քոնիմը պոն էլ ես առնուն, խոշ ինձի մի առնուլ ասող չիկա: Ցած ինձա, քոնիմը փայջ առի, տրի թեվիս դազը, էլի կուզիմ առնուլ, ամա կիդիս տա մեզը թեվաս քաշա գու...

Մենալ օր ածվիս պածի, գաշիմ ծիս չիկա: Հասկընձա, որ թեվաս քաշողը ծիս գըլլեր: Համան վիթ թըռա, օնձա ջոմպուն ընտին, գաշիմ ծիս գայծի, թայն էլ մոդը: Նստա ծիս, մենալ աշեծի իդա դաշին մեծ քարին ու մըտկիս աստի: «Էլ գիդի, Ազոպ, դըհա ճահել իս, հե՛ճ ըն քարը ծածի՞գու տա: Վեվ կիդա՛ հազար դարի հոդ գոյնած ա՛ այճու բես, դըհա հազար դարի էլ գոյնի գու, էրգու հազար էլ, վեվ կիդա...»:

Բաշ արավ ուր բաղմուտինը հայս ու աստավ ինձի:

- Դե, իմիմ, միստ ծին, մոնճըս, ու էշտունկ: - Հա, տուն միստ,- աստի յես ու ծին պերի մոդիգ,- իըն էլ չաստիր՝ ֆիդա պերի՞ր տա Մաջարայըն:

- Հալբատ,- աստավ հայս,-ըն իրիգունը հասա Մաջարա, կըղա Յոնոլի բաբուն, սաղ օլսուն, ֆիդըն էլ ըղվավ, աղ իրիգուն էլ բահեծ ինձի յո ակվոնձու ջոմպեց յեղ՝ Ջաբալ:

Հայս նըստավ ծին ու գոմած-գոմած նախործակ էշտուլ, յեսօր աս քարին դոդրուն հասակ, հայս մենալ աշեծ, կիդիս տա նախանձվեծավ:

- Քար ա, քար, քառսուն դարի օնձավ, ամա կիդիս տա մագ մը ժաճած չա: Իմ մա-գեյս ջերմըլծուն, ուծօր էլ առաջունը չա: Հալբատ օր յավաշ-յավաշ եղ էշտուլ ա,- աստավ ու քաշեծ ծիյուն դիզգինը:

Յես էլ աշեծի այճ-քարին, օդնա-կըլոխ չապեծի յո թայլուզին հեղը խաղալըն հոյս էղվոնձ կընծի: Աղ զըլլեր 1927-28 թվերուն: 1949 թվին հայս թոննեծ ուր 81 դարին ու մեռավ Աբուխավարա կեղին ուր չինած դոնը: Թաղված ա կեղին մեռելնեծին՝ մեծ ընգընները դագ:

Աղ օրերըն օնձած ա 56 դարի: Յես օր աղ սրըն 10-11 դարիգոն էլը, ըղա 66 դարիգոն: Հիմի էլ ըմըն սըրա Քար բուղագըն վար-վիր օսնելըս՝ ծուն մը գաշիմ հոյս քարին, միդըս պերիմ գու ընու ըղած բաղմուտինը. ըղըն հարուր դարին թոմնի գու, հոյս քարըն մագ մը ժաճած չա...

Բառարան

Աս- թեք տառով նշված է ՋՅԻԿԻ խոսվածքին յուրահատուկ և ձայնավորը:

- բիջիլիգ - փղթրիկ թայլուզ, թայլուջ - քունակ սակար - պեծիկ դալիկունի - երիտասարդ էխտիար - ծեր դիզգին - սամ ղոծկաղելն - տրտինգ տալով ըլլիկս գաշիմ - շուրթս եմ նայուն բազլունա - կույտ ջոնճըվեր - ծանոթ շավալ - աղջամուրջ գալատ - կորով ինսուզ - ամայի մըզեղ - միմգրել (վոաջի) քալոնձ - ուղթով կերմագ - մանր ջոմբըջ - գլարճանք, այստեղ՝ փորձանք նեյգիս - երազունս գայծի - արանում է ակվոնձու - առավոտյան սըտկիլան - ուշադիր թոմնի գու - կլրանա Մաջարա - գյուղի ամուն է

(Շարունակությունը՝ 8-րդ էջում)



Нона Шахназарян

Краснодар, Центр Кавказско-понтийских исследований, Кубанский государственный Университет, кандидат исторических наук

(Начало в N 5-6, N7-8)

Можно и/или нельзя: ориентализм

[С точки зрения Запада] Восток неизменно ассоциируется с сексом. ...Восток кажется по-прежнему предлагает не только плодородность, но сексуальное обещание (и угрозу), неутомимую чувственность, беспредельное желание, глубокую генерирующую энергию, что-то над чем можно поразмыслить²².

Бесконечные табуации пронизывают повседневность хемшилов. Запреты касаются прежде всего сферы гендерных отношений, через них мистифицируя/ритуализируя весь жизненный цикл. Религия велит нам не отдавать своих женщин (Карим Салих Оглы). Во время Рамазана нужно избегать близости. Женщинам нельзя иметь длинные ногти. Им нельзя носить короткие волосы²³. Женщинам необходимо носить штаны и платок в любую погоду, независимо от сезона, потому что мужчины не должны видеть женские волосы, ступни ног²⁴ и запястья. Мевлут заставлял своих сестер и жену носить носки даже в летний зной. Невестка не должна разговаривать со свекором и другими мужчинами из родни мужа. Она должна потупив взор отвешивать им тройные поклоны - темене.

В рамках подобных разговоров меня немало удивили подчеркнутая интимность отношений между некоторыми членами родственного круга (например, племянницы и дядя со стороны матери), которые показались мне чрезмерными, раскрепощенно-чувственными, идущими вразрез с существующими практиками запретов. ...Собрались в очередной раз во времянке у Мамута и Ульфат. Все весело общались, чтобы Ульфат не грустила и не плакала по сыну. Состав все время обновлялся за счет текучки - люди приходили, уходили. Это была большая комната-подиум, где гости, сидя на дошагах на полу ели шорбу, пили чай с халвой, фундуковым щербетом и другими сладостями, смеялись. Тут же купали малышку Мухтасару. Тахмина расчесывала волосы [своей тете по отцу] Эмине. Нури сосредоточенно массирует спину своему дяде, долго-долго растирая его благовонными маслами (запись в полевом дневнике). Гиперэмоциональность и интимная

Женщина как [сакральное] нечистое

Религиозность и отправление мусульманских культов заполняют всю повседневную жизнь старшего поколения во многих семьях (пятиразовый намаз, многократные обмывания-абдесты, ежегодное соблюдение месячного поста -Рамазана). Ритуалы эти касаются всех сфер жизненного круга, в особенности брачного цикла: собственно брака (обязательный обряд нико (nikah, или nikoh), мусульманский эквивалент христианского венчания), сексуальности (обязательный гусул (ghusul) - омовение от корней волос до пят сразу после каждого совокупления). Как явствует из многочисленных интервью, мораль (мусульманская традиция) строится на представлении о греховности телесной жизни,

шины тоже могли участвовать в молитвенном ритуале, но в последней комнате, параллельно с мужчинами, но никак ни вместе с ними (желающих, однако, и не оказалось).

Apocalyptic: не быть дома у себя дома...

Есть у хемшилов и свой конец света, но это не имеет ничего общего с их эсхатологическими представлениями, увы, - это реальность. Каждый хемшил знает этот год, день и час - 1944, 25 ноября, 5 утра. Для тех, кто был в возрасте, чтобы помнить, одно упоминание о депортации из Аджарии вызывало бурный всплеск негативных эмоций. Рукия Акбуок 1906 г.р. развела руками и, беззвучно плача, стала бить себя ладонями по коленам, так и не промолвив ни слова. Бабушка Сути 1900 г.р. разрыдалась и

ный факт и наличие родственников в Турции стали декларируемыми причинами высылки хемшилов в 1944 г.- так называемая «превентивная мера военного времени, обеспечивающая «благонадежность» и «лояльность» пограничного населения»²⁹. Так или иначе, 25 ноября 1944 г., по постановлению ГОКО № 6279сс от 31 июля 1944 г., хемшилы подверглись тотальной депортации, носившей, в духе того времени, внесудебный характер³⁰.

Пережив режим «спецпоселения» и оправившись после реабилитации в 1956г., уравнившей их в правах с остальными советскими гражданами и снявшей с них стигму предателей родины, неблагонадежных хемшилы столкнулись с новыми сложнейшими проблемами, связанными с распадом СССР и этническими конфликтами в новых неза-

БЕСЕДЫ С ДРУЗЬЯМИ-ХЕМШИЛАМИ: ЭМОЦИИ ПОД ЛУПОЙ

чувственность последнего действия, по-видимому нивелировалась ситуацией публичности происходящего. Это была особая рода, легитимная интимность, вопреки барьерам и иерархиям, или каким-то образом выскакивающая из сложноплетенных границ цикла запретов. Атмосфера того вечера вызвала реминисценции из Саида, который, апеллируя к творчеству Флобера, описывал восприятие образа Востока, с головой утопающего в сексуальных фантазиях: Набор ориенталистских клише включает в себя: гаремы, принцесс, принцев, рабов, покрывала, танцующих девочек и мальчиков, шербет, натирания (ointments)²⁵. Демонстрируемая через прикосновения к телу, но при этом а-сексуальная любовь племянницы к дяде (на Кавказе есть огромный пласт фольклорных текстов, учреждающих особый статус дяди по матери, мистифицируя сам термин родства) представила образец некой ритуализованной интимности.

...Тяга к интимности охватывает собой лишь один из полов - женский. С точки зрения Э. Гидденса имманентная женщинам интимность в обхождении с Другим (с миром) корыстно используется мужчинами с их властолюбием²⁶. Но кажется власть/властолюбие и ответственность [за тех над кем властвуешь] идут рядом (по крайней мере на семейном уровне патриархата). Тепло и уход, интимность, которую дарят своим мужчинам женщины обращаются в виде ответственности, помощи, в виде заботы чуть другого рода, но тоже дефицитной [для женщин]. Может тогда речь идет о взимности, точнее взаимодополняемости²⁷- о том неуловимом, что придает не только обаяние и экзотизм, но и гармоничность миру, где эти правила игры в ходу. Дядя не только заботится о племянницах (как и о других женщинах родственной группы), одаривая их (подчас в таком же ритуальном порядке), но и стоит на страже их интересов в символическом поле внутриобщинных отношений. [Интимность] корыстно используется мужчинами? - может, это все-таки не тот слу-

демонизации отношений между полами, в частности полового акта. Об этом свидетельствуют представления о том, какими должны быть ритуальные омовения супружеских пар после каждого соития (гусул). По нашему обычаю, по Курану, после такого дела обязательно надо купаться у нас. Обязательно! По Курану написано, если после такого дела, надо, только положено сделать семь шагов. После семь шагов каждый поставленный шаг - уже горит земля, небо. Нельзя, вообще нельзя, запрещено. Купаться, а потом только можно ходить. Посмотреть кому-то в глаза - нельзя, разговаривать с кем-то нельзя..., вот, например, с мужем тоже нельзя, пока не искупаемся. Вот мы встали после этого дела и оба купаемся. Сначала женщина, потом мужчина. До этого с мужем нельзя говорить, прикасаться к нему нельзя, смотреть ему в глаза нельзя! нельзя, вообще нельзя!...Смотреть ребенку в глаза нельзя, вообще ни на что смотреть нельзя. Встала и, никуда не смотря, идешь умываться...

Конструирование нечистого, тем самым, происходит через разграничение, жесткое разделение сфер (мужской, женской, детской, старших), практики исключения и дистанцирования. Еще один казус в связи с этим был в последний день Рамазана, когда огромное количество хемшилов обоего пола и всех возрастов собрались в «нашем» доме на терави-немаз и я, по наивности, посчитала ситуацию вполне уместной, чтобы снять вечернее публичное моление на видеокамеру. Муфтий Терват и имам Нуриддин переглянулись, но были достаточно вежливыми, чтобы вовсе не выставить меня из комнаты моления, но нашли альтернативу в том, что символически отгородили меня (мое физическое тело) от молящихся мужчин деревянной табуреткой. На мой вопрос зачем это? молодой имам ответил само-собой-разумеющимся тоном - женщины не могут молиться вместе с мужчинами, [они - нечистые? - подумала я]. Часом позже выяснилось, что желающие помолиться жен-

запритчала в голос. Произнося каждое предложение об изгнании, казалось, она делала усилие над собой, не в силах удержаться от безостановочно текущих слез. Дед переехал из Турции в село под Батуми потому что кукуруза хорошо росла и пастбища свободные были, да и соль, керосин... Хорошо жили в Аджарии до 1944 г., в ноябре выслали в Среднюю Азию. 18 дней в товарных вагонах везли, все там же делали (отправление естественных потребностей- Н. Ш.). Потом хотели на родину, переехали в Грузию, не в Батуми, но в Гуляян, там нам разрешили жить. Но потом сказали, что мы вореем у них и снова выгнали нас. Поехали кто куда уже, кто назад в Среднюю Азию. Потом приехали сюда» (Ислам Оглы Сути 1900 г.р., беседовала на смешанном тур. и хемш. яз.)

Мужчины тоже не могли и не пытались удерживаться от слез. Люди на станциях боялись подходить к вагонам, им сказали, что в них везут «врагов народа», «людоедов»...Когда еле-живые мы приехали на место, первое время местные к нам также относились... Салих Хасан, пос. Вперед. Наших мертвых мы не хоронили, а выбрасывали из товарного поезда. Это было сплошное унижение и оскорбление... и рабство (Абдамит Салих); нас выслали как скот, в грузовых вагонах. В 1944 г. мы и турки-месхетинцы пострадали одинаково (Ровшан Салих). Трансцендентальная бездомность и мука невосполнимой утраты²⁸ звучали в словах старца Кошанидзе Абдуллы: В 90-е я поехал туда... ночевал одну ночь в СВОЕМ ДОМЕ в с. Гонио. Там живут сейчас аджарцы... У нас было 1000 баранов... 400-500 человек-аджарцев во время войны в Турцию убежали. Сталину донесли... дал приказ всех выслать... всех! Никого не пожалел... (плачет).

В истории хемшилов этническая идентичность очень часто (можно сказать, с некоторой цикличной повторяемостью) играла роковую роль. Сложные перипетии истории хемшилов напрямую связаны, по всей видимости, с их проживанием в приграничной зоне. Именно дан-

висимых государствах. Так, под давлением националистически настроенных бандитских группировок в Киргизии хемшилы снова были вынуждены покинуть насиженные места, переехав в Краснодарский край.

...Изгнание - это нечто до безобразия земное, обусловленное не мистическими, а грубо прозаическими историческими предпосылками. ... на изгнание людей обрекают только люди - и никто иной. ...изгнание - та же смерть, только менее милосердная ... это затяжная агония вдали от привычного климата и традиций, вдали от близких. - писал Эдвард Саид. И дальше считать, будто изгнание способствует пробуждению гуманности - значит утешаться банальностями. Зато изгнаник знает как минимум две культуры, ...ему открыты параллельные миры, то есть его сознание на языке музыки можно назвать контрапунктическим³¹ - и этим он богат. Депортация стала тем самым всеми [хемшилами] почитаемым бедствием, которое еще сильнее укрепляет социальные узы, кристаллизует общую идентичность, сплавливает.

Схема «идеальной» реальности

Близкое рассматривание хемшилских ритуалов (как реликтовых-избегание; так и действующих-умыкание невест, оплакивание умерших) в этом тексте вызвано некоторой экзотизацией прошлого, но не только - оно в то же время вполне осознанное и намеренное. Их особое место в изучении эмоций связано с их тесной сопряженностью со сферой тех же эмоций³². Ритуалы жизненного цикла обеспечивают средствами исследования верований и практик, которые конституируют современные сообщества и располагают людей в рамках этих сообществ³³. Обряды и ритуалы - это символические акции, регулирующие межличностные и институциональные отношения, конструируя порядок/последовательность смыслов, норм, ценностей и правил группы - это модели, с которых должна лепиться повседневная жизнь.



Ритуал способен трансформировать события в доходчиво-понятную реальность в силу харизматической силы тех, кто его представляет/исполняет. Таким образом ритуалы контролируют желание и опасность до тех пор, пока привносят их в [повседневный] опыт в концептуальном (умозрительном) и эмоциональном порядке... Они не диктуют (и не могут диктовать) индивидуальное поведение и эмоции, но они помещают индивидов в социальный контекст в качестве социального Я. Эти обряды участвуют в культурном оформлении сознания, эмоций и действий³⁴. Иными словами, ритуалы жизненного цикла - это locus смьчки индивидуального (эмоции, приватное) и социально-структурированного (строгая последовательность и отрегулированность ритуального действия). Если суммировать все сказанное, именно через ритуалы в человеческой группе конструируется «идеальная» реальность, то как должно быть. Они оглашают условия конвенционального поведения, фокусируя внимание скорее на социоцентрическом, нежели эгоцентрическом, педалируя скорее коллективную нежели личную идентичность.

В частности, в хемшилском сообществе описанные выше табуации, обряды, ритуалы выступают как комплекс механизмов и рычагов, которые безусловно подавляют индивидуальность, зато до крайности обостряют групповую/общинную, семейную, фамилно-родовую солидарность. Они представляют круг социальных действий, прямо направленных на укрепление социальных уз³⁵.

